պիտի լինի Հասանայ որդի Ապիրատի հետ(1)։ Մեր այս արձանագրութեան մէջ յիշուած Գրիգոր Մագիստրոսը, անկասկած, Վասակ Հոլումի որդին է, յայտնի մատենագիրը. նրան է յատուկ կայսերական (բիւզանդական) հաստատութիւնների եւ պարգեւների յիշատակութիւնը արձանագրութիւնների և թղթերի մէջ(2), որ հետեւանք էր Բագրատունեաց անկումից յետոյ ստեղծուած քաղաքական կացութեան, եւ Գրիգորի ձեռք բերած դիրքի և ազդեցութեան։

Արձանագրութիւնը գրուած է ՈՂԿԲ (=1013) թուականին, այլ բովանդակութեան նայելով՝ Բագրատունեաց անկումից՝ 1044 թուականից յետոյ, երբ Գրիգոր բարձր պաշտօն էր ստացել Բիւզանդիայում։ Բայց եկեղեցին շինուած է և կալուածը գանձային արած նշանակուած թուականին, այսինքն Գագիկ Ա.ի (981–1020) եւ Սարգիս կաթուղիկոսի (992–1020) օրով, ուստի եւ խօսք կայ աշխարհակալ թագաւորի թղթի և հայրապետական նամակի մասին. մէկով հաստատուած է, որ նա «ի տէրանց աշխարհիս», այսինքն թագաւորական համարուած երկրամասում, գնել էր այդ կալուածը, իսկ միւսով, թէ վանքը Պահլաւունեաց սեպհականութիւն էր, ինչպէս եւ քիչ յետոյ (ՆՁ=1031 թ.) թագաւորական և հայրապետական հրամաններով եպիսկոպոսարան էր հիմնել Բջնի քաղաքում(3)։ Կայսերական կնքով հաստատութիւնը կատարուած է շատ աւելի ուշ, երբ նա հոգալ էր սկսել իւրաշէն կամ Պահլաւունեաց ուրիշ եկեղեցիների մասին, որպիսին Կեչառույքն էր, Մարմաշէնը(4)։

Արձանագրութեան մէջ տեղեկութիւն չկայ, թէ փրկչական պատկերը, «որ ի փայտին» եւ որի համար յատուկ «աւթարան» էր շինած, ծագմամբ ո՞րտեղից է. բայց նա հին է քան արձանագրութիւնը, հին է մինչև առաքելական շրջանը ըստ աւանդութեան։ Գրական հնագոյն տեղեկութիւնը, բացի արձանագրութիւնից, տալիս է միայն Վանականը, ԺԳ. դարու առաջին կիսում. իւր «Հարցմունք»ի մէջ յայտնում է, թէ Գրիգոր մագիստրոսը «Դարուն եկեղեցի է շինել եւ ծախիւք պատկեր բերեր եւ անդ եդեալ»(1)։ Վարդանի Աշխարհացոյցը, որ ԺԳ. դարու երկրորդ կիսի գործ է, և յամենայն դէպս ԺԳ.ի երկրորդ կէսից առաջ, Հաւուց Թառը նոյնացնում է Դարիւնից եկեղեցու հետ. «իսկ ի կողմ Գառնոյ Տարաւնէից մեծ եկեղեցին, որ է Հայոց Թառ, ուր կայ կենդանագիր պատկերն փրկչական»(2). մենք կ'տեսնենք, թէ ի՛նչ է հասկանում հեղինակն այս խօսքերով։ Մանուէլ Բջնեցին(3), որ ապրում էր ԺԳ. դարի վաթսունական թուականներին, այս սրբութեանը նուիրած գանձի մէջ ունի աւելի մանրամասնութիւններ նորա ծագման և Հաւուց Թառում հաստատուելու աւանդութեան նկատմամբ։ Սրբութեան ծագումը կապուած է խաչելութեան պատմութեան հետ եւ համեմատ է արձանագրութեան. սուրբ կոյսին մխիթարելու և նորա տրրտմութիւնը մեղմելու համար՝

«Յովհաննէս երթեալ, զկիպարին առեալ,
ի խաչէն մնացեալ.
Հրաշալի կոփեալ, դէմ խաչին կացեալ,
արտասուօք հայցեալ.
Տ՛ուր որ ընծաեալ՝ մաւր քո կարաւտեալ
զտիպ ոծագրեալ»։

Տէրը հրաշագործում է, եւ երբ կոյսը տեսնում է, ասում է.

«Սա է ստուգագրեալ որդին իմ խաչեալ,
փրկիչ անուանեալ»։

(1) Մատթէոս Ուռհայեցի. Էջմիածին. 1898. 10-11։ — Վարդան Պատմիչ. Մոսկվա. 1860. 131։— Մխիթար Այրիվանեցի. Մոսկվա. 58։

(2) Կոստանեանց. Գրիգոր Մագիստրոսի թղթերը. 1910. 104։ Կեչառիսի նոյնատիպ արձ. մեր Գրչ. Ար. Գ. 15։

(3) Շահխ. Բ. 181։ Ալիշան. Այրարատ. 271։

(4) Արձանագր. Կեչառիսի մեր Գրչ. Ար. Գ. §21։ Գրիգոր Մագիստրոսի թղթերը. Կ. Կոստանեանց. 1910. ԽԴ.։

(1) Ձեռ. Էջմ. N 1515։

(2) Թոփչեան. Ցուցակ Ձեռագրաց Խաչիկ Վարդ.ի 1898. Ա. 77։

(3) Տես մեր «Ազիրեկենը եւ նրանց շինարարութիւնը». Բանբեր. Էջմ. Գիտ. ինստիտուտ. 1922. 192-193։ Մանուէլ Բջնեցին մէկն է իւր ժամանակի ամենանշանաւոր եկեղեցականներից. ծագմամբ եղիվարդի Ազիրէկենց իշխանական տնից. Բջնիի եւ Արարատեան երկրի եպիսկոպոսը. ստացել է ձեռագիրներ իւր կողմից ստանաւոր յիշատակարաններով, նաեւ մի փառաւոր, նկարազարդ Աստուածաշունչ Անիի Յովհաննէս Ոսկեփոր եպիսկոպոսի ձեռքով գրուած։ Բացի Ամենափրկչին նուիրուած գանձից, Մանուէլն ունի եւ ուրիշ գանձեր։